ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների գոյություն ունեցող ենթակառուցվածքների օգտագործման ու համադրման և «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» ու այլ ԳՏՃՄ առարկաների ծրագրի և մեթոդաբանության մշակման ու դասավանդման մասին

ք. Երևան **13 հոկտեմբերի 2023թ.**

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ ԿԳՄՍ նախարարություն), ի դեմս նախարարի տեղակալ՝ Արաքսիա Սվաջյանի և «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ (այսուհետ՝ ԱՏՁՄ)-ի՝ ի դեմս գործադիր տնօրենի ժ/պ Սարգիս Կարապետյանի, միասին հիշատակվելիս այսուհետև՝ Կողմեր,

Հիմք ընդունելով.

-Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը գերակա ճյուղ հայտարարելու ռազմավարական նպատակը:

Կարևորելով.

-ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների գոյություն ունեցող ենթակառուցվածքների օգտագործումն ու դրա սերտ փոխկապակցումը դպրոցական ընդհանուր ծրագրին.

-«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» և այլ ԳՏՃՄ առարկայական նոր չափորոշիչի արդյունավետ ներդրման անհրաժեշտությունը.

-Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգում իրականացվող «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ոչ ֆորմալ կրթական ծրագրի ընդլայնումը.

-Սույն հուշագրով ամրագրված միջոցառումների արդյունավետ իրագործումը պետություն–մասնավոր հատված համագործակցության շնորհիվ,

Կողմերը ստորագրում են սույն Հուշագիրը հետևյալի մասին.

• Համագործակցելու են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների գոյություն ունեցող ենթակառուցվածքների օգտագործման, համադրման և «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» և այլ ԳՏՃՄ առարկաների ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) և մեթոդաբանության մշակման և դասավանդման գործում:

- Պարտավորվում են ներդնել իրենց ջանքերն ու աջակցությունը «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» և այլ ԳՏՃՄ առարկաների ծրագիրը հաջողությամբ իրականացնելու և շարունակականությունն և ընդլայնումը ապահովելու համար:
- Նպաստել «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների կրթական ծրագրի ընդլայնմանը՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում:
- Սույն Հուշագրի Կողմերը հանձնառու են ապահովելու այս նախաձեռնության տարածմանն ու հանրաճանաչությունը հասանելի բոլոր միջոցներով:

Համագործակցության հիմնական սկզբունքները.

- Ծրագրի շրջանակներում համագործակցությունը հիմնվում է Կողմերի հանձնառությունների ժամանակին և պատշաճ իրականացման վրա:
- Կողմերը հանձնառու են համագործակցելու՝ առաջնորդվելով օրինականության, գործընթացների և իրականացվող միջոցառումների թափանցիկության և փոխադարձ հարգանքի սկզբունքներով:
- Համագործակցել Կողմերի միջև բաց երկխոսություն ապահովելու սկզբունքով:
- Կողմերը հանձնառու են համագործակցելու՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական և կրթական ոլորտներում՝ պետական շահի պաշտպանության սկզբունքով:

Կողմերի համագործակցության շրջանակը.

<u>«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպությունը՝</u>

1. Պարբերաբար իրականացնել «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների վերազինում և համալրում՝ ըստ անհրաժեշտության:
2. Ապահովել «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների բնականոն աշխատանքը:
3. Պարբերաբար իրականացնել «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների խմբակավարների մասնագիտական վերապատրաստում:
4. Ապահովել փորձագետների, խմբավարների մասնակցությունը «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների գոյություն ունեցող ենթակառուցվածքների օգտագործման ու համադրման՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» և այլ ԳՏՃՄ առարկաների ծրագրի մշակման աշխատանքներին:
5. Ապահովել «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների գոյություն ունեցող ենթակառուցվածքների օգտագործումը՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» և այլ ԳՏՃՄ առարկաների ծրագրի դասավանդման ընթացքում:

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝

1. Ստեղծել հնարավորություն և աջակցել «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների գոյություն ունեցող ենթակառուցվածքների օգտագործման ու համադրման՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» և այլ ԳՏՃՄ առարկաների ծրագրի և մեթոդաբանության մշակման աշխատանքների իրականացմանը:
2. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ապահովել «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» և ԳՏՃՄ և այլ առարկաների ուսուցիչների և «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների խմբավարների համագործակցությունը՝ գոյություն ունեցող ենթակառուցվածքների օգտագործման և դասավանդման գործում:
3. Խրախուսել ուսուցչի մրցույթի կարգի պահանջներին համապատասխան ընթացակարգով «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների խմբավարների մուտքը հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ դասավանդելու «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկան:

Հուշագրի գործողության ժամկետը և դադարեցումը

Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է անժամկետ:

1. Կողմերից որևէ մեկի կողմից սույն Հուշագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների չկատարման, անպատշաճ կատարման, կամ Ծրագրի շահերին հակառակ գործողություն իրականացնելու դեպքում խախտող Կողմի հետ Հուշագիրը դադարեցվում է:
2. Սույն Հուշագիրը կարող է դադարեցվել նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ այդ մասին առնվազն 60 օր առաջ գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

Հուշագրի կողմերը

«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ
Գործադիր տնօրենի ժ/պ՝
Սարգիս Կարապետյան

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Նախարարի տեղակալ՝ Արաքսիա Սվաջյան